ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1965 Общественные науки

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Այն երկու հարցերից առաջինը, որն անմիջապես ծագում է 19-րդ դարի սկզբին Վենետիկում հրատարակված «Տարեգրություն» պարբերականի կապակցությամբ, հետևյալն է. ո՞վ է եղել նրա խմբագիր-հրատարակիչը։ «Տարեգրության» ոչ մի հատորի վրա այդ կարգի նշումներ չկան, Մխիթարյան միաբանության հետագա ուսումնասիրողներն էլ, ինչ-ինչ պատճառով այդ կարևոր հարցի պարզաբանմանը չեն անդրադարձել։

Իրավացի է ակադ. Ա. Կարինյանը, երբ իր «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության մեջ (հատ. 2-րդ, էջ 102—104) անդրադառնալով այս հարցին տրտնջում է, որ Վենետիկի Մխիթարյանները իրենց տարեգրքի հետ կապված այդ կարևոր մանրամասնությունն անգամ, մինչև օրս չեն կարողացել ճշտել։

Ո՞վ է ուրեմն, «Տարեգրության» խմբագիր-հրատարակիչը։

Ինճիճյանը մեր այն հեղինակներից է, որը որևէ դեպք կամ եղելություն շարադրելիս, սովորություն ունի ընթերցողներին հղել դեպի իր մյուս այս կամ այն աշխատությունը, ավելի հանգամանալից տեղեկություններ ստանալու համար։ Այս հանգամանքը զգալի կերպով օգնում է մեզ վերոհիշյալ հարցին պատասխանել կարողանալու համար։ Օրինակ. իր «Դարապատում» աշխատության 6-րդ հատորում, նկարագրելով ֆրանս-գերմանական պատերազմը, գրում է. «Թե կուզես, որ ֆրանսըզին ու նեմցեին զարնըվիլը Ճենովայի վրա ավելի տեղնիտեղը լսել գրեր ենք 1800 տարեգրության մեջ. հոն նայե 28 թղթեն, ինչվան 35 թուղթ» (էջ 424. այստեղ և հետագայում ընդգծումները մերն են)։ Կամ. նույն աշխատության մեջ, նկարագրելով Հյուսիսային Իտալիայի նվաճումը, Ինճիճյանը հավելում է. «Թե որ կուզես ավելի ընդարձակ կարդալ աս բաներուս վրա, գրեր ենք 1801 տարեգրության մեջ. Ա մասն, որ է պատերազմական վիճակ աշխարհիս. հոն կարդա, 4 թղթեն ինչվան 14» (Անդ, էջ 430)։ Կամ, վերջապես, նկարագրելով տպագրական մեքենայի մի նոր արագատիպ տեսակը, շտապում է ընթերցողին հիշեցնել. «Տես ասոր վրա մեր Տարեգրություն, 1802, փետրվար, թղթ. 23 (Անդ, հատ. 7, էջ 58—59) և այլն։ Մենք միտումնավոր կերպով բերեցինք Ինճիճյանի հղումներն առ «Տարեգրության» տարբեր տարեթվերը, որպեսզի կասկածի տեղիք չմնա, որ նա իրոք հանդիսացել է բոլոր համարների խմբագիր-հրատարակիչը։ Կարծել, որ Ինճիճյանը պատահաբար կամ սխալմամբ է կատարում այդ հղումները, որոնցից, ի դեպ, կարող ենք էլի բերել, ճիշտ չի լինի, որովհետև դրանք, ինչպես ակնհայտ է, միանգամայն որոշակի և գիտակցված բնույթ ունեն։ Իսկ ենթադրել, որ Ինճիճյանը, օգտվելով այն բանից, որ «Տարեգրության» ոչ մի հատորի վրա նշված չէ հրատարակողի ով լինելը, կամենում է սեփականել ուրիշի աշխատանքը,— անմտություն կլինի։ Մնում է գալ միակ և վերջնական եզրակացությանը, այն է՝ Վենետիկում դարեսկզբին հրատարակված «Տարեգրություն» պարբերականի

խմբագիր-հրատարակիչը, կամ, ինչպես հաճախ գրում են Մխիթարյանները, «հորինողը» իրոք Ղուկաս Ինճիճյանն է։

Մյուս՝ ոչ պակաս կարևոր հարցը վերաբերում է «Տարեգրության» հրատարակության ժամանակահատվածին, այսինքն՝ թե ո՛ր թվականից է սկսել հրատարակվել այն, և մինչև երբ է հարատևել։ Այստեղ էլ փաստերը տարբեր են և հաճախ իրարամերժ։ Զարբհանալյանը, ինչպես արդեն ասացինք, նշում է 1799—1802, և այս թվականները նշում է առանց որևէ փաստարկման։ Գալեմքյարյանը իր աշխատության մեջ առանձին գլուխ հատկացնելով «Տարեգրությանը» հրատարակության համար դնում է 1800—1802 թվականները։ Գարեգին Լևոնյանը 1895 թվականին Ալեքսանդրապոլում հրատարակած իր «Հայոց պարբերական մամուլը» աշխատության մեջ (էջ 9—10) նշում է, որ «Տարեգրությունը» լույս է տեսել 1800—1803 թվականներին, սակայն նույն Գարեգին Լևոնյանը, 1934 թվականին հրատարակած իր «Լիակատար ցուցակ հայ լրագրության» աշխատության մեջ միանգամայն այլ թվեր է դնում՝ 1799—1802։ Եվ վերջապես, արդեն վերջերս հրատարակած իր աշխատության մեջ, ակադ. Ա. Կարինյանը հանգամանորեն քննելով «Տարեգրությունը», կրկնում է հրատարակության հին թվականը, այն է՝ 1800—1802[1] և այլն, և այլն։

«Տարեգրության» առաջին հատորի՝ որ թվականին հրատարակված լինելը ճշտելու գործին օգնում է հենց ինքը՝ Ղուկաս Ինճիճյանը։ Նույն տարեգրքի 1802 թվականի համարում, սկսելով հայկական ամիսների նկարագրությունը և անդրադառնալով փետրվարին, նա գրում է. «Հոռմուլոսի ատենը չիկար աս ամիսը, ինչպես որ ըսին՝ առջի տետրակին մեջ. Նումա, իր հաջորդը ավելցուց և տարվոյն էն ետքի ամիսը դրավ, 28 օր տալով»։ Եվ իրոք, 1800 թվականի «Տարեգրության» մեջ, Ինճիճյանը բացատրելով ամիսների անունների ծագումը, երկար կանգ է առնում փետրվարի վրա, տալիս նրա հունական անվանումը, այդ անվան իմաստը, այդ ամսվա ընթացքում կատարվող տոները և այլն, և այլն։ Այս ամենն ասված է, ինչպես վկայում է Ինճիճյանը, «Առջի տետրակում», այսինքն՝ 1800 թվականին հրատարակված «Տարեգրությունը» նա համարում է առաջինը։ Եթե նշենք, որ այլևայլ առիթներով կատարելով բազմաթիվ հղումներ դեպի «Տարեգրության» այս կամ այն հատորները, Ինճիճյանը 1800-ից առաջ հրատարակված ոչ մի համար երբեք չի հիշատակում, և եթե ավելացնենք, որ բանասիրությամբ ու մամուլի պատմությամբ զբաղվողներից ոչ ոք, ավելի քան 150 տարվա ընթացքում 1800-ից առաջ տպագրված «Տարեգրքի» ոչ մի համար չի տեսել, չի վկայակոչել և չի հիշատակել, ապա կարելի կլինի պնդել, որ Ղուկաս Ինճիճյանի հրատարակած «Տարեգրությունը, սկսել է հրատարակվել 1800 թվականից սկսած։

Հաջորդ տարեթվերի հրատարակություններն արդեն բնականոն ընթացք են ստանում։ Յուրաքանչյուր տարեթիվ լույս է տեսնում տվյալ տարվա վերջին և անդրադարձնում է գերազանցապես նախորդ տարվա պատմա-քաղաքական դեպքերը։ 1800 թվականի «Տարեգրությունն», օրինակ, պատմում է 1799 թվականին տեղի ունեցած նշանավոր իրադարձությունները, 1801 թվականի «Տարեգրությունը» արտացոլում է 1800 թվականի դեպքերը և այսպես,

1 Տե՛ս «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հատ. Բ. Երևան, 1960, էջ 102—124։

մինչև 1803 թվականը։ 1803 թվականին հրատարակվում է «Տարեգրության» չորրորդ տետրը, որը և լինում է վերջինը։ Հիշյալ 1803 թվականի տետրը նախորդների համեմատությամբ խիստ սակավագյուտ է, այնքան, որ որոշ բանասերներ նույնիսկ գտնում էին, որ այն ընդհանրապես չի հրատարակվել։ Մանրամասնորեն հարցի վրա չծանրանալու համար նշենք միայն, որ 1803 թվականի «Տարեգրությունը» ձեռքի տակ ունեցել է բանասեր Ներսես Ակինյանը, որը և տվել է նրա, ցավոք սրտի, համառոտ նկարագրությունը[2]։

Թե ինչն է եղել «Տարեգրություն» պարբերականի դադարման պատճառը, դժվար է ասել։ Համենայն դեպս, որոշակիորեն կարելի է պնդել մի բան. հայությունը, առավելապես նրա ընթերցող հատվածը, շատ էլ մեծ սեր չի ցուցաբերել դեպի Ինճիճյանի այս գործը։ Այս կապակցությամբ, 1828 թվականին հրատարակված «Դարապատումի» 6-րդ հատորում, նկարագրելով Պավել I կայսեր մահը և մատնանշելով, որ այդ մասին ավելի մանրամասն գրել է «Տարեգրության» 1801 թվականի համարում, Ինճիճյանն ավելացնում է. «Որ եթե ժողովրդյան ընդունելի ըլլար՝ միտք ունեինք աս տարեգրությունը ամմեն տարի ինչվան հիմա շարունակել, օրեոր տեղեկություններ եվելցնելով, ինչպես որ ետքեն հանել սկսավ Լե Սյուռ Փարեզի մեջ։ Դիպվածները պատմելեն զատ վերջը պիտոր դնեինք նոր գյուտերն, որ ամեն մեկ տարին կգտնան, խելացի դատաստանները, որ աշխարքիս մեջ կըլլան, թագավորաց դաշնագրությունները, երևելի ճամբորդությունները և այլն» (էջ 444)։

Հիշյալ հատվածը, բացի այն բանից, որ մի անգամ ևս վկայում է Ինճիճյանի՝ «Տարեգրության» խմբագիր-հրատարակիչ լինելու մասին, կարևոր է նաև հետևյալ պատճառով։ Նախ՝ պատահական չէ ֆրանսիացի պատմաբան, հոդվածագիր Շարլ-Ֆուի Լը Սյուռի (1770—1849) անվան հիշատակությունը։ Վերջինս, ինչպես հայտնի է, գրական-հրատարակչական բազմաբնույթ գործունեություն ծավալելուց բացի, հիմնադիրը հանդիսացավ «Քաղաքական և պատմական տարեգիրք» խորագիրը կրող մատենաշարին, որն սկսեց հրատարակվել 1828 թվականից, տարին մեկ գրքույկ, և որը պատմում էր տվյալ տարվա գրական-պատմական-հասարակական նորությունները։ Այս է, որ ի նկատի ունի Ինճիճյանը իր վերոհիշյալ ակնարկում, և այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչն է նախագաղափար-օրինակ հանդիսացել հայ վարդապետի համար, իր «Տարեգրությունները» հրատարակելիս։

Երկրորդ. ամբողջ քաղվածքն ուշադիր կարդալիս, աչքից չի վրիպում այն դժգոհ տոնը, որով Ինճիճյանը խոսում է իր «Տարեգրության»՝ ժողովրդի կողմից քիչ ընդունելի լինելու մասին։ Առհասարակ Ինճիճյանը, իր բազմաթիվ աշխատություններում, հնարավոր առիթը բաց չի թողնում «ընթերցասեր հայազգիներից» դժգոհելու, որ նրանք չեն խրախուսում իր գործը, օգնական և սատարող չեն հանդիսանում իրեն, չեն հետաքրքրվում իր տարեգրքով և այլն։ Այս տրտունջը հեշտ է մեկնաբանել։ Ինճիճյանի հրատարակած պարբերականները՝ ինչպես «Տարեգրությունը», այնպես էլ, հետագայում, «Եղանակ Բյուզանդյան-բազմավեպը» անհամեմատ բարձր էին կանգնած իր ժամանակաշրջանի ընթերցողներից։ 18-րդ դարի սկզբի գրական ցածր մակարդակն ունեցող և «Եփրեմ Սուրին»-ով, «Պատմություն Պղնձե քաղաքի»-ով, «Խիկար իմաստունի առակներ»-ով և այս կարգի այլ գործերով իր հոգևոր կարիքները

2 Տե՛ս «Հանդես Ամսօրյա», 1936, № 4—6, («Դիտակ Բյուզանդյան պարբերագրին անդրանիկ թիվը լույս տեսած 1808 ին»).

բավարարող ընթերցողներին Ինճիճյանը մատուցում էր ֆրանսիական հեղափոխության ու նրա բնույթի, ֆրանսիական լուսավորիչների (Դիդրո, Վոլտեր, Ռուսսո) գործունեության, Նապոլեոնի իտալական արշավանքների մասին հոդվածներ, տալիս էր եվրոպական պետությունների (Գերմանիա, Պրուսիա, Դանիա, Շվեդիա, Հոլլանդիա) վերջին տարիների վերլուծական պատմությունը, ժամանակի արվեստների՝ թատրոնի, արձանագործության, երաժշտության նկարագրությունը և այլն, և այլն։ Հասկանալի է, որ այս կարգի նյութերը շատ էլ չէին կարող հետաքրքրել հայությանը և այս էլ վճռեց «Տարեգրության» բախտը։ 1803 թվականին, չորրորդ համարի հրատարակությունից հետո, «Տարեգրությունը» դադարեց և այդ դադարը նրա համար հարատև եղավ։

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ